ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136,
Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

27.07.2016թ.
288-9

ՀՀ Ոստիկանության պետ
Վլադիմիր Գասպարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գասպարյան,

2016թ.-ի հուլիսի 27-ի վաղ առավոտից ք. Երևանի Խորենացու և դրա հարակից փողոցների տարածքում գտնվող գրեթե բոլոր քաղաքացիներին՝ այդ թվում անչափահասներ, կանայք, ծերեր (բացառությամբ լրագրողական քարտ,կամ տարածքում բնակվող փաստը հաստատող փաստաթուղթ ունեցող անձանց), ոստիկանության աշխատակիցներն ուղեկցում են հատուկ տարածքներ, հաճախ բռնի ուժով, առանց մեկնաբանություններ տալու: Նրանք նաև չեն պատասխանում իրենց աշխատանքային պարտականությունները կատարող լրագրողների հարցերին, թե ինչ նպատակով և ուր են տարվում այդ քաղաքացիները, որով և խոչընդոտվում է լրագրողի աշխատանքը:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Խնդրում ենք տրամադրել, թե վերոնշյալ հատվածում ոստիկանության գործողությունները ի՞նչ նպատակ ունեն և իրավական ի՞նչ հիմքերով են իրականացվում:
2. Արդյոք քաղաքացիները պատշաճ տեղեկացվե՞լ են, այդ հատվածում իրենց գտնվելու սահմանափակումների վերաբերյալ: Եթե, այո, ապա ի՞նչ կարգով, ի՞նչ միջոցներով և տրամադրել համապատասխան հայտարարությունների պատճենները կամ հղումները:
3. Հուլիսի 27-ի առավոտյան ժամը 8:00-ից մինչև 19:00 քանի՞ քաղաքացի է ոստիկանների կողմից բերման ենթարկվել Խորենացու և դրա հարակից փողոցներից, քանի՞սն են ազատ արձակվել:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան